



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 1137 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի
փետրվարի 27-ի N 303-Ն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի 90-րդ կետի՝ Հայաս-
տանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի
9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստական-
ների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու
մասին» N 330 որոշման կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Բնակարանի կարիք ունեցող են համարվում այն փախստականները, որոնք
ներկայացրել են հաշվառման վերցվելու մասին դիմում, բնակարանային պայմանների
մասին համապատասխան տեղեկանք և բնակվում են՝

ա) վթարային բնակարանային ֆոնդում, նկուղներում, ոչ հիմնական շինություննե-
րում (տնակներում) և բնակության համար հարմարեցված այլ ոչ հիմնական շինություններում,

բ) հյուրանոցներում, հանրակացարաններում, հանգստյան տներում, առողջարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, հիմնարկների վարչական շենքերում և հանրային օգտագործման այլ տարածքներում (այսուհետ՝ ժամանակավոր կացարան)։

գ) ազգականների մոտ,

դ) ինքնակամ զբաղեցրած բնակարաններում,

ե) վարձով, իսկ պետական բնակարանային ֆոնդում՝ ենթավարձակալությամբ:».

2) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25. Սույն կարգի 23-րդ և 24-րդ կետերում նշված ցուցակներում չընդգրկված փախստականները հերթագրվում են ընդհանուր ցուցակում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետություն ներգաղթելու տարեթիվը, ընտանիքի անդամների թիվը՝ ըստ սույն կարգի 7-րդ կետում նշված հերթականության:».

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 27-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակվելու հետևանքով ժամանակավոր կացարաններին պատճառված հաշվեկշռային վնասի փոխհատուցման կարգի մասին» N 776 որոշման 1-ին կետը «ժամանակավոր կացարաններին» բառերից հետո լրացնել «(հյուրանոցներ, հանրակացարաններ, հանգստյան տներ, առողջարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, հիմնարկների վարչական շենքեր և հանրային օգտագործման այլ տարածքներ) (այսուհետ՝ ժամանակավոր կացարան)» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի «Փախստականների, ինչպես նաև 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակվելու հետևանքով ժամանակավոր կացարաններին պատճառված հաշվեկշռային

վնասը փոխհատուցելու մասին» N 313 որոշման նախաբանը և կարգի 1-ին կետը «ժամանակավոր կացարաններին» բառերից հետո լրացնել «(հյուրանոցներ, հանրակացարաններ, հանգստյան տներ, առողջարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, հիմնարկների վարչական շենքեր և հանրային օգտագործման այլ տարածքներ) (այսուհետ՝ ժամանակավոր կացարան)» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունք հայցողին և քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին ժամանակավոր կացարանով ու կենցաղային այլ պայմաններով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 219-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետում «ժամանակավոր կացարանով» բառերը փոխարինել «ժամանակավոր կացարանով՝ հանրակացարանային բնակելի տարածքով,» բառերով.

2) կարգի 1-ին կետում «ժամանակավոր կացարանով» բառերը փոխարինել «ժամանակավոր կացարանով՝ հանրակացարանային բնակելի տարածքով (այսուհետ՝ ժամանակավոր կացարան),» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. հոկտեմբերի 23
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ